

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 136

Քրիստոսի միջնորդական թագաւորութեան սկիզբը – Հարցումը որ մարդիկ յաճախ վիճում են այն է թէ՛ «Ե՛րբ է սկսում այս թագաւորութիւնը»: Թէպէտ Քրիստոնէաների մեծամասնութիւնը այսօր ընդունում են թէ Քրիստոսը տիրում է հաւատացեալների սրտերումը, սակայն նրանք մերժում են Քրիստոսի թագաւորութեան ներկայ իրականութիւնը, ասելով թէ այս ներկայ դարի վերջում Քրիստոսը կ'վերադառնայ եւ ներս կ'առաջնորդի Իր հազար տարւայ մեսիական թագաւորութիւնը երկրի վրայ, եւ ուստի այն ժամանակ կ'ստանձնի գահն որպէս Թագաւոր: Ուստի, վախճանաբանական առումով այս տեսակէտը ճանաչւած է որպէս նախահազարամեականութիւն, որովհետեւ Քրիստոսի երկրորդ գալուստը տեղի է ունենում նախքան Իր մեսիական թագաւորութեան հաստատման: Այս տեսակէտը շատ տարածւած է այսօրերս եւ ունեցել է շատ զգալի ազդեցութիւն բազմաթիւ վարդապետութիւնների վրայ եկեղեցում՝ յատկապէս վախճանաբանութեան վարդապետութեան վերաբերեալ:

Միս ձեռքի վրայ, Վերակազմ վարդապետութիւնը ուսուցանում է թէ Քրիստոսի թագաւորութիւնը արդէն սկսել է Քրիստոսի առաջին գալուստով: Թէ Յովհաննէս Մկրտիչը եւ թէ Յիսուսը հռչակեցին թէ Աստուծոյ թագաւորութիւնը եկել էր (Մատթէոս 3:2, 4:17): Յիսուսի հանրային ծառայութիւնը, Իր Աստուծոյ թագաւորութեան քարոզչութիւնը, եւ Նրա հրաշքները բոլորը գլխաւոր նշաններ էին որ երկար սպասւած թագաւորութիւնը վերջապէս հասել էր (Ղուկաս 4:16-21, 16:16, 17:20-21): Յիսուսը յայտարարեց թէ Իր դեւերի դուրս հանելը, եւ զօրաւոր մարդու կապելը (Մատանային), ապացոյց էին թէ Աստուծոյ մեսիական թագաւորութիւնը վրայ էր հասել (Մատթէոս 12:28-29):

Քրիստոսը՝ որպէս վերջին Ադամը եւ իսկական Իսրայէլը (Գաղատացի 3:16, Ա. Կորնթացի 15:45), եկաւ անելու այն ինչ որ առաջին Ադամը եւ Իսրայէլը ձախողեցին անելու՝ այսինքն մատուցանել կատարեալ հնազանդութիւն Հօրը, եւ այդ Նա կատարեց Իր ուղղարար կեանքով եւ զոհաբեր մահով, կրելով մեղքի դէմ եղած Աստուծոյ բարկութիւնը, եւ կատարելով փրկութիւն Իր ժողովրդի համար (Յովհաննէս 4:34, 5:30): Այսպիսով Նա յաղթեց Մատանային եւ յաղթանակեց խաւարի թագաւորութիւնը (Կողոսացի 2:14-15):

Ա. Պետրոս 3:22-ում առաքեալը գրում է թէ՛ «Յիսուսը գնացել է երկինքը, եւ Աստուծոյ աջ կողմն է. հրեշտակներն եւ իշխանութիւններն եւ զօրութիւններն հնազանդելով Նրան» (Հռովմայեցի 8:34, Եբրայեցի 8:1): Այս մտքի է բերում Դանիէլ 7:13-14ի շքեղ տեսիլքը, որը Յիսուս Քրիստոսի համբարձման առթիւ մի մարգարէութիւն էր, որը կատարելով Իր գործը երկրի վրայ, համբարձաւ Հօրը (Հինաւորքը) ամպերով (Ղուկաս 24:51, Գործք Առաքելոց 1:9-10), եւ Նրան տրուեցաւ յաւիտենական եւ փառաւոր հեղինակութիւն եւ թագաւորութիւն. եւ որը այժմ նստած է Հօրը աջ կողմը (Գործք Առաքելոց 2:33, Եփեսացի 1:20): Աստուծաբաններ այս եղելութեան ակնարկում են որպէս Քրիստոսի երկնային թագաւորութիւնը եւ նիստը՝ որպէս օրինաւոր Թագաւորը (Եբրայեցի 2:9):

Քրիստոսի Մեծ Պաշտօնակոչումը իր աշակերտներին հնարաւոր է հենց դրա համար որ «ամեն իշխանութիւն» յանձնել է Նրան, ուստի Իր եկեղեցին կարող է գնալ եւ իրականացնել իր առաքելութիւնը ամբողջ աշխարհում (Մատթէոս 28:18-20): Աստուծոյ խոստումը Աբրահամին՝ որ նա պիտի լինի բազմաթիւ ազգերի հայրը եւ երկրի բոլոր ազգերը նրա սերունդովը պիտի օրհնեն, գտնում է իր լրացումը Յիսուս Քրիստոսում (Գաղատացի 3:16), որը կոչում էւ հաւաքում է Իր ժողովրդին՝ Աստուծոյ հոգեւոր Իսրայէլին (Գաղատացի 3:29, 6:16), բոլոր երկրի ազգերից (Եսայիա 42:6, 49:6, Զաքարիա 2:10-11, Մաղաքիա 1:11, Ղուկաս 2:32, Գործք Առաքելոց 1:8, 13:47): Հենց հիմա, ամբողջ աշխարհում, ծունկեր կրկնում են եւ լեզուներ դաւանում թէ Յիսուս Քրիստոսը Տէր է (Փիլիպպեցի 2:10-11):

Ուրեմն Աստուծաշունչը յստակօրէն յայտարարում է թէ Քրիստոսի թագաւորութիւնը պարզապէս Քրիստոնէայի մի ապագայ յոյս չէ. այլ այն մի իրականութիւն է որ արդէն տեղի է ունեցել: Յիսուսը գահակալւած է երկնքում որպէս «Թագաւոր թագաւորաց եւ Տէր տերանց» (Յայտնութիւն 17:14, 19:16): Եւ որպէս Քրիստոնէաներ մենք այս թագաւորութեան պատգամաւորներն ենք (Գործք Առաքելոց 1:8): Եկեղեցու առաքելութիւնն է Քրիստոսի անտեսանելի թագաւորութիւնը տեսանելի դարձնել:

Արդէն եւ ոչ դեռ – Սակայն, Յիսուսը նաեւ անգամներ ակնարկեց Իր թագաւորութիւնը որպէս դեռ ապագայ (Ղուկաս 22:15-18, 29-30, Գործք Առաքելոց 1:6-7): Աստուծոյ թագաւորութեան առթիւ եղած մի շարք առակներով, Քրիստոսը ուսուցանեց թէ Աստուծոյ խոստացած վերականգնման գործը արդէն սկսել էր, բայց դեռեւս լրացած չէր. եւ թէկուզ այդ փոքր սկսեց, սակայն այդ պիտի շարունակի աճելու ժամանակի ընթացքում, եւ պիտի մի օր հասնի կատարման (Մատթէոս 13:31-33, նաեւ Դանիէլ 2:34-35): Այս ճանաչւած է որպէս «արդէն բայց ոչ դեռ» գաղափարը, ուր Աստուծոյ թագաւորութիւնը արդէն սկսել է, բայց դեռեւս պիտի կատարելագործի: Այն եկել է, գալիս է, եւ մի օր կ'գայ իր լիութեամբ: